ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N22Ա
20 ՀՈՒՆՎԱՐ 2022Թ

ԿԱՐԱՊԵՏ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԵԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 3-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ազատեկի միջնակարգ հանրակրթական դպրոց», «ՀՀ Վայոց ձորի մարզի Արինի միջնակարգ հանրակրթական դպրոց», «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջեղեայի հիմնական հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի նոյեմբերի 26-ի /Մ-9177-2021/ / գրությամբ ներկայացրած փաթեթը և Կարապետ Ղազարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի հունվարի 21-ից Կարապետ Ղազարյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Ազատեկի միջնակարգ հանրակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:

2. 2022 թվականի հունվարի 21-ից լուծել Կարապետ Ղազարյանի հետ կնքած 2017 թվականի հունվարի 20-ի N353 աշխատանքային պայմանագիրը:

1/21/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ